


891.99

4-87



ՊԵՂՐՊՈՍ ՄՈՀԱԽԵՍՆԵՑ

ՍԱՍԻԿՈՎՆԵԱՆ ԱՐԻԻԹԸ

(ՅՈՒՆԱ)

ԱԼՔԻՍԵՆԴՐԱՊՈԼ
Յպարտն Յ. Ղասապեանցի
1909

19 NOV 2011

ԳԵՂԱՔՈՍ ՄԱՀԱՍՏԱՆԻՑ

891.99 մր.
5-87

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԱՐԻՒԹԸ

(ՊՈՒՏՈ)

5
5
5
5
5



Ա.Ի.ՔՍԱՆ.ԴՐԱ.ՊՈՏ,
Յպարտն Յ. Ղափաղեանցի
1909

.07. 2013

4477

ԵՐԴՈՒՅԵԱԼ ՀԱԻԱՏԱՐՄԱՏԱՐ
ՅՈՎՀԵԱՆՆԵՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ
ԵՐԱԽՏՎԱԳՈՎԱՆ ՆՈՒԻՔՐ.

Թէպէտ եւ եմ ածու փոքր եւ ընդ ալլով յօլով
անզամ նօւաննալ բազաւորութեամբ, սակայն բա-
զում զործ արութեան գտանին զործեալ 'ի մեռում
ուխարհիս եւ արժանի գրոց լիօատակի:^ա
ԽՈՐԵՆԱՑԻ.

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք.

Այնտեղ, ուր այսօր խօրին թախիծով
Տղմուտն է հասում պղտոր ու վարար,
Ուր գիշեր ցերեկ քամին մենասէր
Երգում է անվերջ մի երգ ցաւագար,

Ուր բիւր սերունդներ մէկ մէկից յետոյ
Դարերլց ի վեր եկան ու անցան,
Եւ որոնք այսօր թողած մի հառաչ
Սառն հողի գրիսոմ հանգչում են անձայն.

Այնտեղ, այն երկրում որպէս մի տւանդ
Կանգնած են տլուր լիռներն Արտազի,
Եւ խոր ցաւերով յիշում են անվերջ
Փառքի օրերը հին սերսնդների:

Ո՛, բարի անցորդ, քո հոգին այնտեղ
Պիտի խոր խոցուի դառն ցաւերից,
Եթէ մի ըստէ յիշես բերկրութեամբ
Թէ ինչե՞ր անցան այն լերանց գլխից:

Այնտեղ, ուր այսօր արծիւն է ճշում
Մոռունչն առիւծի գանում արձագանք,

Ուր խիտ անտառը խոր է հառաջում
Որպէս մի ընկճուած ծերուկ հոգեվարք,

Սինտեղ երբեմն անուշ էր լսվում
Հզօր յաղթութեան երգի աղաղակ,
Սինտեղ ապդիկը յաղթողի փառքով
Ազատ էր հնչում օրհնութեան նուադ:

Իսկ այն սուրբ լերանց խոր անձաւներում
Էլ չկան այսօր հզօր մարտիկներ,
Որոնց ճիշերից առիւծն էր զողում,
Օքծիւլ թռչում հեռաւոր լեռներ:

Եւ ուր երջանիկ նախնի երգիշներ
Նմ անմահ նախնեաց գովքն են միշտ արել,
Եյսոլ, և Մուսա, կորցրտծ ամեն փառք
Մեղ պէտք է սըգի տխուր երգ երգել:

Սակայն ների՛ր ինձ, եթէ երգս հնչուի
Որպէս սըգւորի լալագին մրմունչ,
Ինչպէս ցուրտ աշնան քամուց բեղարած
Խեղճ տեղեների արձակած շշունչ.

Կամ օրպէս անոք մի ցաւազարի
Վերջին ժամերի արձակած հառաշ,
Որը չի մարում սստղերի ներք
Ցաւոտ աշխարհի վաղճանից առաջ:

Յայց նշ, ի՞մ Մուսա, ում համար թանգ է
Սուրբ շըրիմներն իր նախորդների,
Ով որ սիրում է իր փառքը հարանց
Նըրա երգերը տըլսուը չեն լինի:

Դէհ, լսիր ուրեմն երգըս հմայիշ,
Անցած դարերի այս մեծ յաղթանակ.
Լսիր որ ինձ հետ օրհնես հերոսիս—
Անմահ Վահանի աղնիւ յիշատակ:



ՆՈՒԹ.Գ. Ա.

Վ. Յ Տ Ի Ե Ր Գ Ի Զ Ը .

Պետք զնայր զօրավարն Հայոց
Վահան Մամիկոնեան յամուշ տե-
ղիս սահմանացն Խաղսեաց ոզի
առնուլ եւ հանգչի առ վայր մի՞ւ:
ՓԱՌՊԱՑԻ

Ժայռոտ լերան լանջի վերայ
Մի ամրոց կար բարձրացած,
Որի ներքէ ծովն էր շաշում
Բերնին փրփուր, կատաղած:

Պինդ խփում էր ծովն անընդհատ
Մշտադալար եղերքին,
Հեած, ընկած ափի վերայ
Որոտ հանում դառնագին:

Խոր հառաշով աղմկում էր
Ճաշող քամին հարաւի,

Ծովի ափին կանգ առնելով
Լսում էր երգն ամենի:

Իսկ այն դալար ափի վերայ
Բարձրանում էր ծեր մայրին
Խրսխա ու լուռ կանգնած մենակ
Դիտում հսկայ ամրոցին:

Եւ մայիսեան չքնաղ մի օր
Մի ծեր գուսան տիրագին,
Նըստեց յօդնած այն ծառի տակ
Դէմքը դարձրած ամրոցին:

Տանջուած սրտի հառաշանքով
Նա յարդարեց իր ըընար
Եւ մեղմ խըֆեց իր լարերին
Ցաւած սրտով վշտահար:

Ալիքների որոտի հետ
Մեղմ քընարը հառաշեց,
Եւ լարերի քաղցր ձայնին
Անուշ երգը ձայնակցեց.—

„ԴՌԵՐՍ ԵԿ ՎԱՀԱՆ, ԴՌԵՐՍ ԵԿ ԴԻՎԱՂՆ
Քո անառիկ ամրոցից,

Տես ի՞նչ լուրեր քեզ բերել եմ
Մեր արնաներկ աշխարհից:

„Ես գալիս եմ այն վայրերից
Ուր սար ու ձոր թափառքին
Վկայ եղան կտրիճ մարդու
Սրտի վերջին հառաչին:

„Ես անցկացայ հովիտներից
Կարմիր արնով ողողուած,
Տեսայ վարդի թերթը դալուկ
Դորշ արիւնով սեացած:

«Ո՛, այն դաշտում միայն հողմն է
Որ հառաչում է ուժգին,
Նմակն է մութ ականջ դընում
Դիշակերի կառանչին:

„Իսկ երկնքից շողքը լուսնի
Դալուկ դէմքերն է շոյում,
Մեղմիկ բամին դաշտի միջին
Նրանց սկ օրն է ողբում:

„Դժւրս եկ դիւցաղն, դուրս եկ, լսիր,
Խոր են սրտիս վէրքերը,

Երգչի սիրտը իմստ է տխրում
Երբ չեն լսում երգերը“:

Ծեր գուսանը երգը կտրեց
Կլարեց ձայնը բամբիռի,
Բայց շունջով չ'բացուեցան
Լայն դռները ամբոցի:

Ճատ սպասեց ծեր ելգիշը
Նայեց ծովին փոթորկած,
Սպա ելաւ, քնարն առաւ
Ու հեռացաւ վշտացած:

Մինչ ծովն ահեղ ափերի մէջ
Մերթ շաշում էր հառաչում
Կամ թէ նորից ծափեր տալով
Խռպոտ ձայնով շառաչում.

Եւ մինչ հովը դալար հովտում
Ճօղն էր խլում բոյսերից,
Քնած մայրին նոր էր զարթել
Արշալոյսի շողքերից՝

Մեծ ծառի տակ նորից նստեց
Այն գուսանը քաղցրաձայն,
Նորից նայեց լուռ ամբոցին
Նորից երգեց բարձրաձայն.—

«Թուրս եկ, Վահան, դուրս եկ դիւցազն
Դուրս եկ ահեղ ամբոցից,
Խեղճ գուսանիս սիրան է այրվում
Հայրինիքի ցաւերից:

«Ել ի՞նչ հանգիստ, էլ ի՞նչ խնդում
Երբ ծեր գուսանն է լալիս,
Լսիր նրան, անյաղթ իշխան
Թէ ուսկից է նա դալիս:

«Աւերակ է հայ աշխարհը
Ճէն, աւաններ էլ չկան,
Քարքանդ երկրի խարոյկներից
Ծուխն ու հուրն էլ մարեցան:

«Աւեր դարձրեց անգութ ձեռքը
Սիրուն աշխարհն հայրենի,
Եւ կտրիմի ձեռքերն անյաղթ
Փաթթեց շղթան օտարի:

«Ել չի լսվում զէնքի շաշիւն
Քարսնձաւի մութ կիրճից,
2ի որոտում հայ ուզմիկը
Սև ժայռերի բարձունքից:

«Եւ ծերունի անբաղդ հայրը
Որդու շիրիմն է փոքում,
Սրտի վերջին ցաւն ու հառաչ
Աւեր երկրին աւանդում:

«Իսկ դու դարձեալ լուռ ես իշխան,
Սուանձնացած ամրոցում,
Հայրենիքի վիշտն ու արցունք
Քո վեհ սիրտը շեն տանջում:

Նորից լոեց ծեր գուսանը
Հոգոց հանեց դառնագին,
Սրտասուալից իր աշերը
Դարձրած հսկայ ամրոցին:

Բայց դաները ահեղ բերդի
Հբացուեցան շառաշավ,
Հին ամրոցը քուն էր մտել
Քունն էր խորունկ, անվրդուկ:

Ապա յոզնած այն գուսանը
Մի կողմ դրեց իր քընար.
Աշքը գցած կապոյտ ծովին
Սկսեց նայել միալար:

Հանդարտ հովը ծովի խորքից
Յիշատակներ էր բերում,
Եւ հանդիսաց տանջուած սրտի
Նորից յուզում, ազմկում:

Իսկ ծփանքներ իրար խառնած
Մեղմիկ ձայնով դիւթական,
Խոր ու հանդարտ հառաչում էր
Ահեղ ծովը Պոնտական:

Եւ ծերունին լուռ ու երկար
Ականջ դրեց այգ ձայնին,
Որ նման էր իր յուսահատ
Սյրուած սրտի յոյզերին:

Ճատ տարիներ նրա սիրտն էլ
Այդպէս մեղմ էր աղմկում,
Նրա վիշտն էլ խոր էր, անծայր
Խնչպէս ծփանքն այն անհուն:

Դուկ այս անգամ ծեր գուսանը
Ուզեց հանգչիլ ծառի տակ,
Յոզնած մարմնով տարածուեցաւ
Երկնքի տակ կապուտակ:

Զեփիւռն էր լոկ, որ անցնում էր
Նրա յոզնած ճակատից
Ֆերուկ ծառն էր օր օր երգում
Օր օր երգում թախծալից:

Իսկ մեղմ ծովը բիւր ծըփանքով
Սնվերջ աղմուկ էր հանում,
Կարծես ծերուկ հայ գուսանի
Սնուշ երգերն էր կրկնում:

Խորհրդաւոր լըռութեան մէջ
Խաղաղ քնեց ծերունին,
Կոպովները ուսին թափած
Քնարն ընկած իր կշտին:



Հովերն անգամ շեն վրդովում
նրանց անուշ քունն անդուր:

Քունն հանգիստ է յոգնած երկրի
Հերը կտրած է նիրհում,
իսկ զեփիւռը անուշ սիրով՝
իր ժպտի հետ է խաղում:

Ո՛, քունդ անուշ, յոգնած երկիր,
Սչըդ փակիր մինչև լոյս
երբ կը բացուի նոր առաւօտ
եւ ուկչվառ արշալոյս:

Խաղա անուշ մեղմ ժըպտի հետ
Առաւօտեան զեփիւռի,
Ուրախ, անգորը ականջ դիր դու
Մեղմիկ ձայնին հովերի:

Քեզ շեն խափում քո յոյսերը
Դու կը տեսնիս փառք ու լոյս,
Քնիր հանդարդ յոգնած երկրի
Մինչև ծագէ արշալոյս:

Եւ զեն սրառվ ուրախացիր
Ո՞գ հայրենիք սրբազն,

Ըստերն անթիւ, անհուն երկնից
Վար են նայում թախծագին,
Եւ դողդողչուն դիտում լրոիկ
Խոր քուն մտած աշխարհին:

Զինջ կապոյտը ցող է մաղում
Արևատապ բոյսերին,
Յոգնած ամպը քարը թերով
Տոքում ժայռի լանջերին:

Խոր քնած են հայոց երկրի
Հսկայ ժայռերն ահաւոր,

Ջըղթայակապլ որդիներգ
Միշտ ձգտել են փրկութեան:

Կապանքները շեն կաշկամնդել
Ազատասէր այն ոգին,
Ո՞ր դորերով անկախ պահեց
Մեր աշխարհը թանգադին:

Իսկ դու գիտես ոքքա՞ն ծանը են
Ստրկութեան շըղթաներ,
Քլա համար աղատ ոգուց
Հը փաթթեցիր կապանքներ:

Եւ թող քնին Մասեաց սարեր
Քնին նպատ ու Սիփան,
Քանի այդպէս զէնքեր ձեռին
Պաշտպան ունին յաղթական...

Սև ժայռերի կտտարներից
Լուսինն ելաւ դողդողջուն
Եւ լոյս որփոեց սարին, ձորին
Եւ գետերին կարկաշուն:

Հանգարդ նազով կըտրեց, անցաւ
Լայն կապոյտը երկնքի,

Թալուկ լուսով նա ողողեց
Կատարն հպարտ Քարքէի:

Կըտրեց, անցաւ անթիւ ամպեր
Իր երկնային նըհանգից,
Եւ Դըխմուհու չքնաղ ծովում
Կարօտն առաւ հայ երկրից:

Խաղաց, ժպտաց ու ողողեց
Արծաթափայլ ջրհրը.
Ընուշ սիրոյ վառ կարօտով
Լսեց ծովի համերգը:

Սպա նա լուռ, հեղիկ քայլով
Սիրտը անվախ ու անդորը
Սկսեց անցնել կամաց կամաց
Մութ անտառը դարեւոր:

Հայոց երկրի լուսինն ուրախ
Ճողեր ցօղեց այն վայրում,
Ուր որ անթիւ դարեւից հետ
Հայ ուազմիկն էր խըռխտում:

Սակայն երկնից հեղիկ կոյսը
Արագ անցաւ այն բարձրից,

Որ չ' փախցնէ անուշ քունը
Հայ քաջերի աշքերից:

Սռաջ անցաւ դէպ Այրաբատ
Ողջոյն տալու ծեր լերան,
Որ կանգնած էր հպարտ ու վեհ
Որպէս աւանդ սրբազան:

Եւ կարօտի անուշ նազով
Ողջոյն տուեց ծեր սարին,
Հողբը քցած ոլոր-մոլոր
Ախուրեանի ջրերին...

Սպա անցաւ ժայռոտ Տայքի
Հսկայսկան լեռները,
Որոնց վերայ հարգչում էին
Հայոց անյաղթ բերդերը:

Ուր Պոնտոսի ծովի ափին
Տեսաւ ամրոցն երախան,
Ժանիքները երկինք ուղղած
Որպէս վիշապ անսասան:
Տեսաւ այնտեղ մենակ նստած
Հայոց թարգէն գուսանին,

Որ խըփում էր սկըտք կըակ
Թամբուի անուշ լարերին.

Որ թողնելով մենակ, տխութ
Իր սիրուհուն ողբալու,
Դուրս էր եկել Գողթան երկրից
Ազգի ցաւը երգելու:

Եւ լուսինը լսեց վերից
Երգը մատաղ գուսանի,
Ուղղած հզօր ու միշտ անյաղթ
Հայոց քաջին ամենի:

ԳՈՒՍԱՆԻ ԵՐԳԸ

«Քնուրս եկ Վահան, դնուրս եկ դիւցազն,
Եւ կըուի դաշտ ըշտապիր,
Քեզ է կանչում հայրենիքը
Դէպ Զարեանդ սըլացիր:

»Հայոց քաջին մեծ ամօթէ
Տանը նստել միայնակ,

Երբ հայրենիքն հառաջում է
Թռնակալի լըծի տակ:

«Զէնքը ձեռին քեզ են սպասում՝
Հայրենիքի քաջերը,
Հառաջում են հայոց Մասիս,
Արտազ, Սիփան լեռները:

«Հայ կտրիճը վայր չի դընէ
Աճեղ զէնքը իր ձեռքից,
Քանի աւեր հայրենիքը
Հառաջում է խոր ցաւից:

«Քարանձաւի անանց կիրճում
Զէնք են սրում ու զինվում,
Նրանց ձայնի գոռ որոտը՝
Սար ու ձոր է դղրդում:

»Առիւծն այնտեղ փախս է տալիս,
Հայ քաջերի մոռւնչից,
Վախից արծիւն էլ չի անցնում
Հայոց լեռանց վերայից:

«Աւեր երկրի սար ու ձորեր
Կըակ դարձած քեզ կուղեն,

Հասիր գիւցազն, հասիր շուտով
Արտազ լերինք քեզ կուղեն։»

Եւ լուսինը պայծառ երկնից
Լսեց երգը գիւթական,
Որ գովում էր հայոց երկրի
Կըարիճներին յաղթական։

Ու թողնելով հայ գուսանին
Խոհերի հետ առանձին,
Լուսինն անցաւ ողջոյն աալու
Համատարած մեծ ժովին։

Իսկ գուսանը նորից երգեց,
Թամբուին խփեց նա նորից,
Բայց զիշերուան խաղաղ ժամին,
Մարդ դուրս շելաւ ամրօցից։

Եւ վշտացած հայ երգիչը
Տիսուր սրտով վեր կացաւ,
Փոշոտ թամբիւն ուսին քցած
Արագ—արագ հեռացաւ...

Մի հոգս մնաց—ազգի ցաւը
Հայրենիքը իր աւեր:

Հայոց երկրի վիճակն անբաղդ
Սրիւն քամեց իր սրտից,
Եւ սև ցաւի խոր խոցերով
Երգեր հիւսեց վշտալից:

ՆՈՒԹԳ. Դ.

ՅՈՎՀԵՆ ԳՈՒՅԱՆԻ.

Ճառ ու շատ վշտեր եկան, անցան
Այն տարաբաղդ օրերից,
Երբ հեռացաւ իր տուն-տեղից
Ցովհան գուսանը վշտալից:

Երբ որ թողեց Գողթան երկիր
Վանանդ գիւղը հայրական,
Ուսին բցած իր բամբիոը
Դնաց շրջել Հայաստան:

Նա մոռացաւ կին ու զաւակ
Եւ սիրող մօր արցունքներ,

Բայց և ինչեր նա չըտեսաւ
Դժբաղդ երկրի ծայրերում,
Ուր թշնամու անարդ ձեռքով
Հայ աշխարհն էր աւերվում:

Տեսաւ Արտազն աւեր դարձած
Հին Զարեանդն աբնալից,
Տեսաւ ծուլը վիր բարձրացող
Ուշտունեաց դաշտերից:

Տեսաւ հայոց քաղաքների
Աւերակներն ահաւոր,
Որոնց միջին անդուր ձայնով
Բուն էր երգում սըզաւոր:

Կակ ամայի գաշտերի մէջ
Մի կտունչ էր նա լսում,

Որ օդի մէջ միշտ ճախրելով
Արնոտ զիակ էր փնտրում:

Տեսաւ հողի հետ հաւսարած
Թերդ ու պարխսպն հայ երկրի,
Տեսաւ վանքերն աւեր ու լուռ
Սաանց անուշ երգերի:

Որպէս մի բու խեղճ ու սղւոր
Այդ լուռ վայրերն այցելեց,
Ճնմահ նախնեաց փառքն յիշելով
Երկար տանջուեց ու երգեց:

Լացեց աւեր Այրարատում
Ալուրեանի ափերին,
Գնաց պատմեց սրտի վիշտը
Վանայ վճիռ չըերին:

Գնաց տեսաւ արնով ներկուած
Ուրմիական միծ ծովը
Լսեց այնտեղ—ի՞նչ էր երգում
Հար հարաւի սկ հովը...

Եւ այլբան վիշտ, ցաւ ու տանջանք
Տեսաւ երգիչն հայրենի,

Ապա ընկած գիւղ ու քաղաք՝
Պատմեց վիճակն հայ երկրի:

Նա անցկացաւ Տարօն ու Մուշ
Հասաւ մինչև Աշտիշատ,
Գնաց երգել չեր, Զարեանդ,
Նորից գարձաւ Արտաշատ:

Գնաց հասաւ Տիգրանակերտ
Ապա դարձաւ մինչ Դըլին,
Ժայռոտ Վանանդն անցնելով
Հասաւ Տայրի բերգերին:

Եւ ողջ երկրում տեղ չմընաց
Որ գուսանը շայցելէր,
Ու խըֆելով իր բամբիուին
Աղջի ցաւը նա չերգէր:

Իշխանական պալատներում
Օղջի սուզը նա պատմեց,
Անուշ երգի տիսուր խօսքով
Լսողների սիրտն այլեց:

Մենաստանի լուռ պատերը
Նրա երգից թընդացին,

Եւ ռազմական երգի ձայնից
Քերդերն հայոց խնդացին:

Ողջ աշխարհում մարդ չ'մնաց
Որ չ'լսէր իր երգը
Եւ չ'խոցէր ու բորբոքէր
Արնոտ որտի խոր վէրքը:

Երկար դարեր միշտ, անընդհատ
Գողթան երկրի երգիչներ
Անցնում էին հայ աշխարհը
Եւ հնչեցնում բամբիւներ:

Ուսին պցած մի հին բամբիւ
Թողնում էին տուն ու տեղ,
Եւ անընդհատ շրջում էին
Հայ աշխարհը բազմացեղ:

Սև օրերին երգում էին
Սուզը հայոց աշխարհի,
Անվիշտ օրին անհոգ երգն էր
Հնչվում ուրախ, բերկրալի:

Հնում էին այցելելու
Հայոց վանքերն աւերռուած,
Հնում էին անձամբ տեսնել
Հուրն ու ծուխը բոլորուած:

Վտանգներից չերկնչելով
Հասնում էին ամեն գիւղ,
Յոյս կըտային խեղճուկ հային
Լինել անվախ, աներկիւդ:

Փոշով ծածկուած անցնում էին
Հայոց անանց լեռները,
Հանդիպողին պատմում էին
Հայրենիքի ցաւերը:

Իոկ երբ լինէր հայ աշխարհում
Եշխանական հարսանիք,
Կամ կատարէր շքեղ խնճոյք
Հայոց փարթամ արքունիք,

Գուսանները բամբիւներով
Ուրախ վայը կերթային,
Եւ այդ տօնի, կամ հարսանեաց
Գովքն ու փառքը կերպէին:

Բայց հայրենի երգիչները
Մի այլ կոշում ունէին, —
Հնկերակցել ուղղմի երգով
Հայոց երկրի բանակին.

Ոգեռել կուող քաջին
Պատերազմի զոռ դաշտում,
Կամ թէ մեռնել կըտիմի հետ
Կըուի ահեղ խառնուածքում:

Իսկ այս անգամ երգիչն Յովհան
Հայոց աշխարհն անցնելով,
Եկաւ հասաւ Տայք գաւառը՝
Սրտի անհուն ցաւերով:

Պողեց տեսնել, ցաւը պատմել
Մամիկոնեան Վահանին,
Թը եկել էր բերդն Երախան
Տեսնել իր մայր Զւիկին:

Պը որ հայոց իշխանները
Երկար դարեր շարունակ,

Պուղարկէին իրանց կանանց
Պատերազմի ժամանակ:

Ուր կապրէին իշխանուհիք
Ազատ ամեն վտանգից,
Ուր չէր հասնում բիբտ թշնամին
Հայոց լերանց սարսափից:

Բայց թէ ինչի՞ հայոց բերդից
Այս անգամին մարդ չելաւ,
Կամ ինչի՞ էր լուռ ամրոցը՝
Խեղճ գուսանը չիմացաւ:

Իսկ հայրենեաց խղճուկ լացը
Հէր թոյլ տալիս ծեր երգչին,
Թողնել անցնել հին ամրոցը
Դեռ շտեսած այն քաջին...

ՆՈՒԹԳ. Դ.

Ը Մ Ի Ա Յ Ա Խ Ի Մ.

«Քարո՞վ եկար, բարի Յովհանն
Սնուշ երդիչդ հայրենի,
Երախանը ողջունում է
Քո գալուստը ցանկալի:

«Քարո՞վ եկար Դողթան երդիչ
Հայրենիքի խորքերից,
Բարո՞վ եկար, ծերուկ գուսանն
Հայոց աւել աշխարհից:

«Մեր աշխարհի վիշտն ես լալիս
Սնուշ ձայնով մեղմագին,
Վիշտդ երդէ, բարի՝ երդիչ
Ու միշտ վառէ մեր հոգին:

«Քայց դիւցազնին զուր ես վնատրում
Այս անառիկ ամրոցում,
Նա էլ գնաց գէնքը ձեռքին
Ուր հայրենիքն էր կանչում:

«Միթէ անգործ, տանը նըստած
Անփոյթ աշքով կը դիտէր,
Թէ բոնութեան անարդ շղթան
Ինչպէս պէտքէ կապկապէր:

«Ո՛, նա գիտէր որշափ ծանը է
Լուծը անարդ օտարի,
Նրա աշքից քունն էր փախցըել
Վիճակն հայոց աշխարհի:

Քայց դու գուսանն, գնայ նորից
Անցիր Արտազ ու Դըւին
Եւ ժայռերի ահեղ գըկում
Դտիր հայոց քաջերին:

«Քո բամբոի անուշ ձայնով
Ընկերացիր դու նըրանց,
Գովէ անվախ, յոյս ներշնչէ
Երդիր փառքը մեր հարանց:

«Եւ այն վայրում վկայ դարձած
Հայ քաջերի գործերին,
Բիւր երգերով նրանց փառքը
Դու կաւանդես դարերին»:

Այս խօսքերով դիմաւողեց
Զւիկ տիկինը նազելի,
Երբ որ լսեց ամրոց գալը
Հայոց ծերուկ գուսանի:

Ապա յայտնեց, որ իր վաշտով
Դնացել էր Թուղարս բերդ,
Որ տեսակցի Ծրծրունեաց
Քաջ ու անվախ տիկնանց հետ:

Ուր ժողոված ամուր բերդում
Կանայքն հայոց փափկասուն,
Որոշել են խորհուրդ կազմել
Մամիկոնեանց ամրոցում:

Եւ ուր նրանք պիտ որոշեն
Ի՞նչպէս օգնել խեղճ աղքին,
Որ արնաքամ ընկած մենակ
Հառաշում է ցաւագին:

Երբ որ լսեց այս ամենը
Հայ գուսանը քաքցրաձայն,
Անուշ դողով սիրտը լցուեց
Մտքերն իրար խառնուեցան:

Ապա տիկինն հրամայեց
Նաժիշտներին գեղանի,
Քցել փափուկ, տաք անկողին,
Լուալ ոտքերը գուսանի:

Եւ թողնելով երգչին ծերուկ
Խոհերի հետ առանձին,
Հընաղ տիկինն ու կուսանքը
Մեծ ամրոցում ցըռւեցին:

Դեռ չէր հանգչել հայոց բերդում
Ցողնած երգիչն ալեհեր,
Երբ ամրոցի ամեն կողմից
Ժողովուեցան զինւորներ:

Կարօտագին համբոյլներով
Աղերսեցին գուսանին

Պատոմել անցած հարանց վառքը,
Երգեր երգել թափապին:

Եւ զգացուած ծերուկն ուրախ
Խըփեց բամբոի լարերին,
Գովից բերդը Երախանի,
Գովից հայոց քաշերին:

«Ժայռի գլխին բարձրանում է
Հայոց բերդը Երախան,
Ճովի ափին ահեղ, հպարտ
Բերդն է կանգնած անսասան:

»Հողմ ու քամի դուր են շաշում,
Խըփում ամուր պարսպին,
Զուր է փրփրում ահեղ ծովը՝
Ու հառաշում սաստկապին:

«Հին ամրոցը երկար դարեր
Ծովի խաղին է նայում,
Լսում նրա հանդարտ լացը՝
Խոր հառաշն ու որոտաւմ:

«Եւ իր հակայ բարձունքներից
Նա ծաղրում է մեծ ծովին,

Մեղմ հեգնանքով դէմ է կանգնում
Սհեղասաս հողմերին:

«Եւ թող մնայ այդպէս հպարտ
Ընյաղթ ամբոցն հայկական,
Քանի այդպէս զէնքեր ձեռին
Քաջեր ունի պահապան:

»Առ բամբիռդ ծերուկ գուսան
Հայոց երկրի գովքն երգիր,
Առ բամբիռդ երգիշ Յովիան
Երախանի փառքն երգիր:

»Ժայռի գլխին բարձրանում է
Հայոց բերդը Երախան,
Ճովի ափին ահեղ, հպարտ
Բերդն է կանգնած անսասան:



Պըքան քազցը, անուշ հնչեց
Դիւթիշ երգը ծերունու,
Պըքան խոհեր, վէրք ու հրճուանք
Ցաշորդեցին իրարու:

Հայոց երգչի ձայնը մեղմ էր
Դէմքն արևառ ու յսդնած,
Քամբիոը հին ցաւերի պէս
Խռպովները խճընուած:

Ո՞, անուշ հնչեց թովիշ երգը
Մելամաղձոտ լուսնի տակ,
Սնուշ բաղխեց ծերուկ սիրատ
Ուր այրվում էր մի կրակ...

Երբ գուսանը ձայնը կըտրեց
Ու վերջացրեց իր երգը,
Լսողների սրտերի մէջ
Թորխոքուեցաւ հին վէրքը:

Ճուրջ բոլորած ծեր գուսանին
Աղաչեցին բան պատմել,
Դարեր առաջ եկած, անցած
Հայ քաջերի գովքն անել:

Եւ ծերունին սկսեց պատմել
Անմահ նախնեաց գործքերից,
Պատմեց ինչպէս Վահագն քաջին
Երկինք տարան աստղալից:

Պատմեց մէկ-մէկ հայ դիւցազնի
Գլխից անցած անցքերը,
Պատմեց սէրը Աստղիկ կօյսի
Նըրա թողած հետքերը:

Եւ անձնատուր խոր յոյզերի
Հայոց գուսանն ալիոր,
Գնաց հասաւ մինչ դարերը
Հիդրաների ահաւոր:

Պատմեց կոիւն անյաղթ Հայկի
Կործանումը թշնամու,
Յիշեց որդոցը մեր նախահօր
Եւ Արամին ահարկու:

Մէկ-մէկ թւեց յաղթութիւններն
Հայոց Տիգրան արքայի,
Երկար պատմեց կըոփիւները
Արշակունեաց մեծ տոհմի:

Իսկ զինւորներն ուրախ, զուարթ
Լսում էին գուսանին,
Ոգկորուած ականջ զնում
Նախնեաց անմահ գարծքերին.

Եւ զգացուած սուրբ յոյզերով
Հըմկում էին, ծիծաղում,
Ու կամարներն հայոց բերդի
Բարձր ձայնով դղրդում:

ՆՈՒՍ.Գ. Ե.

ԿԸՆԸՆՅ ԽՈՌՀՈՒՐԴՅ

„Միով գօտեաւ նօմարտութեան
պնդեցվն զմէջս արք եւ կանայք,
ԱՆԻՇԵ

Աշդ, ով հայկակ, ասա դու ինձ
Ի՞նչ կայ աւել սրբանուէր
Քան հայ կնօջ ահեղ ուխտը
Նըա խոռտումն անվեհեր...

Ի՞նչ կայ աւել վեհ ու չքնաղ
Քան ուազմասէր հայ կինը,
Ու ուխտում է զէնքով Փրկեւ
Հայրենիքի պատիւը:

Սակայն լսիր, թէ մութ բերդում
Հայոց տիկնայք միասին՝

Ինչպէս կազմած մի մեծ խորհուրդ
Խօսում էին առանձին:

Խօսում էին Տայոց երկրում
Ապաստանած տիկնալը,
Որանց համար թանգ էր ու սուրբ
Միրած աղքի փրկանքը:

Որոնց իր մօտ հրաւիրած
Հւիկ տիկինը նազելի,
Կառաջարկէ ո օգնել փութով
Հայրենիքին սիրելի:

Այնտեղ էին վեհ ու անյաղթ
Իշխանուհիք Գուգարքի,
Որոնց դէմքին փայլում էին
Սպիները վէրքերի:

Այնտեղ էին բարձրահասակ
Անձեացի քաջ կանայք
Որոնց համար կեանքը չունէր
Ուրիշ մի այլ նպատակ,
Քան թէ կըուել ու ազատել
Հայրենիքը սրբազն,

Որպէս ուազմիկ անվերջ մղել
Մի պատերազմ անսասան:

Եւ հայ կինը, որպէս զայլոյթ
Սրաի թոյնն էր դուքս թափում,
Ուր ուխտում էր մնալ անվախ
Կոիւ մղել անդադրում:

Եւ կանացի չքնաղ սեռին
Յատուկ քնքոյշ պերճութեամբ՝
Ջատ խօսեցին հայ տիկնալը
Վառուած աղքի փրկութեամբ:

Ո՛, լին կար աւել բերկրալի
Քան այդ ուխտը սըբանւէր,
Եւ ո՞ր երկրում կին ու աղջիկ
Այնքան քաջ են, ուազմասէր,

Որքան հայոց ազատ մեծցած
Քաջակորով կանալը,
Որ դարերով հանդիսացան
Սպակի վսեմ պարծանքը:

Ահա այդտեղ, այդ ժողովում
Ուր շատ հարցեր վճռեցին,

Քաջ Զւիկն ու Վասկանուշը
Վերջում այսպէս խօսեցին.

— „Դէհ. շուտ գրիք, քոյր իմ Զւիկ
Մեր աշխարհի ողջ կանանց,
Որ բացուել է մեր առաջն
Լայն ասպարէդ նոր փառաց»:

Այսպէս ասաց ու հառաչեց
Քաջ տիկինը Գուգարքի,
Որ չէր կարող անփոյթ լսել
Վիշտը հայոց աշխարհի:

— «Ես կը գրեմ Զւիկն ասաց
Քաջ Անահտին Տարօնի,
Որ շուտ կազմէ մի մեծ բանակ
Եւ լեռներում պաշտպանուի:

«Իսկ Ռշտունեաց գեղեցկադէմ
Իշխանուհի Զարուհին
Հետը առած կըտրիմ կանայք
Գնայ հասնի մինչ Դըւին,

«Կամ Արտազի լեռների մէջ
Մեր գնդերին սպասէ

Եւ քաջաբար մըղած կըոււին
Իր վաշտերով մասնակցէ:

«Կամսարական քաջ տիկնայքը
Դեռ վաղուց են պատրաստուել
Հայրենիքի անկախութիւնն՝
Արեան գնով յետ առնել:

„Անյաղթ Սիւնիքն ու Այրարատ
Հազար կանայք մեզ կըտան
Իսկ Արծ ըրունեաց իշխանուհիք՝
Կրակ դարձած մեզ կուգան:

«Եւ մենք այսպէս պէաք է զինենք
Ողջ աշխարհը հայրենի,
Որ թշնամուն ցոյց տանք հայոց
Կնօջ ոյժը վիթխարի:

«Ապա կանանց այս բանակով
Կըուիր կըտանք Արտազում,
Կամ կըհասնենք մինչ Զարևանդ
Ուր լեռներն են հառաչում:

„Այնտեղ անվախ մենք կը սեղմենք
Սուր ու նիզակ մեր կրծքին,

Անվախ սրտով մենք կը գաղենք
Թէպի աղղի թշնամին:

«Մենք մեր ճիշի մէջ կը խեղդենք
Թիրտ քբքիջը բռնութեան,
Կրակ ու բոց և շանթ գարձած
Մենք կը փշընք մեր շղթան:

»Եւ միթէ մեղ մեծ ամօթ չէ
Ո՞վ իմ քոյրիկ անդրանիկ,
Թողնել անվերջ լայ, հառաչէ
Մի սրբազան հայրենիք:

«Նա որ սնոյց Ղետնդ, ներսէս,
Եւ դիւցազներ անհամար,
Նա որ երկա՞ր, երկա՞ր գարեր
Կուռք է դարձել մեղ համար:

«Եւ ասացէք, միթէ հնար է
Սպրել, մնալ կենդանի,
Ուր որ կեանքը լոկ մի շարք է
Անվերջ արնոտ ժամերի»:

Գինը լաեց, հայեացքն ուղղեց
Լսողներին նազելի,

Որ մտքերի անծայր ծովում
Խորհում էին վշտալի:

Հակառակել քաջ կնօջը
Նրանց մտքից չէր անցնում
Փրկել սալուկ հայրենիքը —
Սմենքն էին ցանկանում:

Եւ շատ անգամ այդ տիկնայքը
Ժողովուել են միասին,
Կեանք ու արիւն զոհ բերելու
Հայրենիքի սուրբ դատին:

Ճատ անգամ են նրանք գրել
Հայոց անյաղթ առիւծին,
Թէ մեր երկրի կանանց խըմբով
Կը մասնակցեն սուրբ կըուին:

Նրանք էին, որ ձայն տուին
Իշխանների ժողովում
«Կուի մղել մինչև ի վերջ
Եւ չնդունել մի զիջում»:

Այժմ տիկնայքն այդ նաղելի
Խորհում էին թախծալից,

Ներկան, անցածն ու գալիքը
Ընցնում էին մտքերից:

— Ծրագրիդ հաւանում եմ
Զւիկ, բոյր իմ սիրելի,
Ըստէս խօսեց վերջապէս
Կինը Վրէն իշխանի

« Ինանք խառնուենք մեր որդոց հետ
Կըուինք անվախ, համարձակ,
Մեր թոյլ ձայնն էլ մարտի գաշտում
Թող տայ մի նոր արձագանք:

« Յոյց տանք պարսից արքունիքին
Որքան քաջ է հայ կինը,
Եւ պահանջենք մեր նախահարց
Թափած արեան սուրբ գինը:

« Վար չդնենք մեր սրերը
Մինչ հայրենիքն անկախ չէ,
Մինչ մատնութիւնն արնոտ ձեռքով
Մեր քայլերին կը հետևէ

» Վրէժի բոցով մենք սլանանք
Ուր որ պարտն է մեզ կանչում,

Ո՞, հայրենիք մեր սրբազան
Զուր ես այդքան հառաջում...

Կինը լոեց ու վեր կացաւ
Սենեակն անցաւ ծայրէ ծայր,
Նորից բազմեց թաւշեայ գահին
Նորից խօսեց արիաբար.

— Դէհ, շուտ արա, գրիր որդուդ
Որ մեզ սպասէ Դրւինում,
Ուր կը կանգնենք մենք քաջաբար
Հայոց զօրքի շարքերում:

« Իսկ այժմ և ետ ճամբայ հանիր
Սուրհանդակներ ժիր, զգօն,
Որ սլանան արծւի թեով
Դէպի Դւին ու Տարօն:

» Պատգամներդ շուտով տանին
Հասցնեն հայոց քաջ տիկնանց,
Յայտնեն նաև մեր սուրբ ուխտը
Քաջ զինւորին հայրենեաց»:

Գեղեցկադէմ իշխանուհին
Էլ իր խօսքը չերկարեց,

Մագաղաթեայ կապոցները
Առաւ տիկնօջը մեկնեց:

Իսկ մտքերի անծայր ծովում
Սուլուած հայոց տիկնայքը,
Դեռ շատ երկար խորհում էին
Սիրած ազգի փրկանքը...

ՆՈԽԱԳ. Զ.

ՄՅՄՐՈՒԵՆԻ ՀԱՆԳԻՄՑԻ.

Օքնեալ լինիս հայոց աշխարհ
Ու միշտ վեհ ես ու անյաղթ,
Օքնեալ լինիք հայոց հովեր
Ու սահում էք անկապանք:

Օքնեալ լինիք խոր ձորերի
Ճինչ ու անուշ վտակներ,
Ու շատ անգամ լուացել էք
Մեռնող քաջի խոր վէրքեր:

Օքնեալ լինիք և դուք դաշտեր
Արնով ցօղած քար ու բոյս,
Օքնեալ լինիս հայոց արկ –
Եւ դու պայծառ արշալոյս...

Եւ արշալոյսն հայոց երկրի
Նոր էր զարթել վառի վառ,
Երբ կանգ առան Մամրուանում
Երկ զոյգ ահեղ երիվար:

Նժոյգ հեծած զալիս էին
Երկու չընաղ աղջիկենք,
Գոտիներից ամուր կապած
Ականակուռ լայն սրեր:

Գլուխներին դրել էին
Սաղավարտներ արծաթից,
Մեծ նիզակներ ձեռքերն առուծ,
Զրահ կապել կրծքերից:

Միայն սիրուն հուսելն էին
Մատնում սեռը կանացի
Որ անխնամ թափուած էին
Այն ուսերին առնացի:

Նրանց յետքից զալիս էին
Երկու հըսկայ զինուորներ,
Հեծած ձիանք փրփուր դարձած,
Հագած սպիտակ զրահներ:

Ճամբորդները վայր ցատկեցին
Իրանց զբիրած ձիերից,
Զոյգ զինուորներն առաջ անցան
Ու բըռնեցին սանձերից:

Եկուորները քոյրեր էին
Սիրուն զուշանն ու Ծատղիկ,
Ար զուրս եկան կէս զիշերին
Երախանից անառիկ:

Եւ այժմ առած սուրբ պատգամը
Հայոց կանանց անվեհեր,
Կըշտապէին դէպի Դիին
Եւ դէպ Տարօն կիսաւէր:

Նժոյգներից վար իջնելով
Նրանք վանքը դիմեցին,
Եւ ցանկացան գնալ տեսնել
Տայքի ծերուկ երեցին:

Սուրբ ծերունին երբ որ լսեց
Զիանց աղմուկն ու դոփիւն,
Լայն զարբասից դուրս շատեց
Առաջ գնաց հիւրերուն:

Անասելի մի խոր բերկրանք
Զարթեց նրա սրտի մէջ,
Ուր վառվում էր սէր ու կարօտ
Եւ մի սուրբ յոյս միշտ անչէջ:

Իսկ կոյսերը լուս մօտեցան
Պատկառելի ծերունուն,
Եւ երկիւղած համբուրեցին
Նրա աջը դողդոջուն:

Գգուեց նրանց ծեր Տաճատը
Եւ համբուրեց զգացուած,
Ու հետն առած զոյգ քոյք քոյքերին
Վանքը մըտաւ պազգեաց:

Եւ ծերունին սկսեց հարցնել
Ո՞ւր էր առիւծը—Վահան,
Ի՞նչ էր խորհում հայրապետը,
Ո՞ւր էր բանակն հայկական:

Կամ թէ ո՞ւր էր բիրդ թշնամին
Երկրի ո՞ւր մասն էր քանդում,
Հայոց երկրի աւագանին
Ի՞նչ էր արդեօք լուս խորհում:

Հքնաղ Աստղիկն երբ որ լսեց
Երեցի խօսքերը,
Յուղած սրտով այսպէս պատմեց
Հայրենիքի ցաւերը.

— «Մենք էլ վաղուց լուր չունէինք
Սահմաններից հեռաւոր,
Միայն երեկ ամրոց եկաւ
Յովհան գուսանն ալեոր:

»Նա լուր բերեց թէ թշնամին
Զարկեանդն է աւերում,
Կըրակ տուած աւան, քաղաք
Հիմքից քանդում է, այրում:

»Իսկ հայկական բանակն անվախ
Հաւաքփում է Արտազում,
Օրհասական կըուի համար
Դիրք է փնառում ու զինվում:

»Այնտեղ կերթայ իր քաջերով
Հայոց առիւծն անվեհեր,
Որ Գըւինում կըակ դարձած
Սպասում է անհամբեր:

«Նա ժողվել է Կամսարական
իշխաններին ուխտասէր,
Նրա մօտն են Մարզպանն հայոց
Եւ Ռշտունիքն անվեհեր:

«Իսկ ծերունի Հայրապետը
Ասել է քաջ Վահանին,
Որ այս անգամ ինքն էլ կըդայ
Մասնակցելու սուբբ կըռւին:

«Նա զինել է Սիւնեաց երկրի
Քահանայքն ու երեցներ
Որ քաջարալ պաշտպանէ
Սուբբ հայրինիքն իր աւեր:

«Իսկ անառիկ երախանում
Տւիկ տիկինը նազելի
Երեկ գիշեր խորհուրդ կազմեց
Քաջ կանանց հետ Գուգարքի:

«Ճատ խօսեցին հայ տիկնայքը
Աղքի ցաւը անհատնում,
Ճատ կշուցին հանգամանքներն
Ու կայացըին որոշում—

«Հրաւիրել հայոց երկրի
Քաջամարտիկ ողջ կանանց,
Որ զէնք առած անվախ, աղատ
Պաշտպան կանգնին հայրենիաց:

«Եւ կամ փրկեն հայրենիքը
Ստրկական վիճակից,
Կամ թէ մեռնին անվախ սրտով
Զարհամարուած ամենքից:

«Եւ մենք ահա այսպէս շտապ
Տանում ենք սուբբ հրաւէրներ՝
Դէպի Դրւին, դէպ Արտաշատ
Եւ Ռշտունիքն անվեհեր»:

Կոյսի բերած այդ լուրերից
Խոր զգացուեց ծերունին,
Եւ բերկրանքի մի վառ կրակ
Փայլեց նրա սուբբ դէմքին:

Ճունչը կըտրած նա լսում էր
Այդ լուրերը ցանկալի,
Ապա դողդոջ, ուրախ ձայնով
Այսպէս խօսեց բերկրակի.—

«Օրհնեա՛լ լինիս աղնիւ աղջիկ
Բարի լինի գալուսըտղ,
Կեանք տուեցին ծեր երեցիս
Բերած բարի լուրերըդ:

«Վաղուց է որ աշքըս դըռան
Լուր կուզէի մեր երկրից,
Բայց Մամրուան ոչ ոք չեկաւ
Մեր արնաներկ աշխարհից:

«Չեկաւ նոյնպէս և ոչ մէկը
Գուսաններից հայրենի,
Չեկաւ պանդուխտ կամ մի օտար
Որ իմ կարօտս առնէի:

»Ոյժ եմ մաղթում հայոց քաջին
Զօրքին անյաղթ մի հաւատ,
Կեանք եմ խնդրում կոռոզ կանանց
Եւ հայրենեացս յուսահատ:

«Կեանք եմ մաղթում չալսապետին
Եւ մի վիճակ բարելից,
Աստուած օրհնէ սուրբ ծերունուն,
Որ տանջւում է վշտալից:

«Իսկ ձեզ, կուսանք ես օրհնում եմ,
Աստուած լինի ձեզ ընկեր,
Գնացէք անվախ, ուր կանչում է
Խեղճ հայրենիքը մեր աւեր:

«Իսկ լինձանից բարե տարէք
Համբոյր տարէք վշտալի
Այն հեռաւոր ու յուսահատ
Հողին, ջրին հայրենի:

«Որ սգում է ու հառաշում
Թոնակալի լծի տակ,
Որ յուսահատ հայեացքն ուզդած
Մեղնից կուզէ մի փրկանք»:

Ելք հանգչեցին Մամրուանում
Ճամբորդները նազելի,
Պատուիրեցին շուտով բերել
Երիվարներն ամեհի:

Նորից ելան համբուրեցին
Աջը Տաճատ ծերունու,
Եւ շտապով թըռան հեծ ան
Նժոյգներին ահարկու:

Եւ դեռ Տայքի սահմաններում
 Հատ չհեռացած աւանից,
 Սուրհանդալիներն հանգիստ առան
 Ու ցած իջան ձիերից:

Համբուրեցին նրանք իրար
 Ու բարի երթ մաղթեցին
 Եւ խփելով նըժոյզներին,
 Տարբեր կողմեր զընացին:

Մէկը գնաց դէպ արևմուտք
 Պարխար լերանց լանջերը,
 Միւսը քշեց դէպի տռաջ—
 Այրարատի լեռները:

Եւ շատ շանցած, աչքից կորան
 Կուսանքն հայոց նազելի,
 Փոշին ծածկեց սպիտակ ուղին
 Լոեց գոփիւնը ձիերի...

Եւ դեռ Տայքի սահմաններում
 Հատ չհեռացած աւանից,
 Սուրհանդալիներն հանգիստ առան
 Ու ցած իջան ձիերից:

Համբուրեցին նրանք իրար
 Ու բարի երթ մաղթեցին
 Եւ խփելով նըժոյզներին,
 Տարբեր կողմեր զընացին:

Մէկը գնաց դէպ արևմուտք
 Պարխար լերանց լանջերը,
 Միւսը քշեց դէպի տռաջ—
 Այրարատի լեռները:

Եւ շատ շանցած, աչքից կորան
 Կուսանքն հայոց նազելի,
 Փոշին ծածկեց սպիտակ ուղին
 Լոեց գոփիւնը ձիերի...

Նորագ. Է.

ԳԻՒՆԻ ԱՌԵՒՑԸ.

Այնտեղ, ուր որ այսօր միայն
 Մահուան գալուկն է տիրում
 Ուր մենասէր, սըգւոր քամին
 Խեղճ ձայնով է հեկեկում,

Ուր սըգում են մոլոր, մենակ
 Եւերակաց կոյտերը,
 Եւ ողբում են անդուր ձայնով
 Խաւարասէր բըւերը,

Կար ժամանակ, որ այդ վայրում
 Հզօր, ուրախ, փառաւոր
 Մեծ Դւինն էր հանգիստ առնում
 Իր փառքերով դարեւոր:

Իսկ այսօր լոկ վայող քամին
Մտհուան մի երգ է երգում,
Յոյզով լցում ճնշուած հոգին
Սիրաը ցաւով աղմըկում:

Բայց այսպէս չէր այն ժամանակ
Երբ նա անկախ էր, ազատ
Երբ իր համար կեանքն էր զոհում
Իր քաջ որդին հարազատ:

Ո՞, այսպէս չէր այն օրերը
Երբ որ կոյսը հեղ Աստղիկ
Տայոց երկրից եկաւ Դւին
Որպէս անվախ մի ռազմիկ:

Երբ հետն առած սուրբ պատգամը
Հայոց կանտնց անվեհեր,
Ներկայացաւ զօրավարին
Եւ Մարդպանին ալեհեր:

Խոր էր քնել այն գիշերը
Դւինն հսկայ ու անդորր,
Միայն քամին նրա համար
Երգել էր մեղմ մի օր օր:

Լայն ու բարձր պարփառները
Որպէս մի մայր գթառատ,
Սեղմել էին իրանց գրկում
Ճին քաղաքը բազմամարդ:

Մեծ Դւինի քունն անուշ էր
Նման քնին այն մարդու,
Որն ազատ է վիշտ ու հոգսից
Ցաւեր չունի տանջելու:

Լայն պարսպի ժանիքները
Ցցուած էին գէպի վեր,
Կանգնած հպարտ ու յաղթանդամ
Որպէս վիշտապ անվեհեր:

Որոնք իրանց բարձունքներով
Ցօնն են խլում ամպերից,
Եւ ներկում են ոսկէ գոյնով
Արշալոյսի շողերից:

Եւ այդ օրն էլ հաստ ժանիքներ
Փայլվեցին ոսկեվառ,
Երբ ներկուեց Ճինջ կամարը
Եւ լեռները շար 'ի շար:

Զարթեց անհոգ հայ զինւորը
Գիշերային խոր քնից,
Հսյեացք գեհց մեծ քաղաքին
Աշտարակի բարձունքից:

Ապա հպարտ դարձաւ նայեց
Ապարանքին հայկական,
Ուր ապրում էր դիւցազն հայոց
Մամիկոնեան քաջ Վահան:

Եւ զգացուած հայ առիւծի
Հերոսական գործքերից,
Այն մեծ քաջին նուիրուած
Երգը երգեց բերկրալից:

Զինիորի երդը
«Ենցիր լուսին էլ մի չողայ
Հայոց չքնաղ երկնքից,
Խլստ ես դժգոյն նրա զիմաց,
Ով որ քաջ է ամենքից:

»Իու էլ անցիր երկնից արև
Եւ թագնուիր ամպի տակ,
Հայոց երկրի արևն այրող
Միշտ է փայլուն ու յստակ:

«Ենցէք գուշ էլ, ո՞վ աստեղունք
Զեր շողերով թախծալից,
Զեղնից պայծառ բոցեր թըռան
Հայոց քաջի գոռ սըրից:

»Հայոց երկինք, հայոց աշխարհ
Թող ըս արգանդն օքնուի,
Որ մեզ համար ծնար Վահան
Այդ առիւծը ամեհի»:

Երգը կըտրեց... զինւորն իջաւ
Աշտարակի բարձունքից,
Մեծ քաղաքն էլ քնից զարթնած
Ուրախ խնդաց բերկրալից:

Այդ ժամանակ մեծ դարբասից
Քաղաք մըտաւ մի գուժկան,
Ուրի յետքից նժոյգն հեծած
Գնում էր մի պահապան:

Հիանց ուժգին դոփիւններից
Ողջ Դաինը դղսդաց,
Խոկ գուժկանի սիրուն տեսքից
Ամբոխը մնաց զարմացած:

Ով էր չքնաղ այն եկտորը
Կամ ի՞նչ գոյժ էր նա բերում
Ոշ ոք կրցաւ հասկանալ
Հայոց ապշած քաղաքում:

Իսկ այն գուժկանն արագ-արագ
Սպարանիքին մօտեցաւ,
Թեթև ու նուրբ շարժումներով
Ահեղ ձիուց վար իջաւ:

Երբ եկտորի գալը լսեց
Սպարապետն ահաւոր,
Ճտապ բայլով առաջ դիմեց
Մի յարգանքով անսովոր:

Դուժկանն եկող Աստղիկ կոյսն էր
Որ գալիս էր հիւսիսից,
Հայոց տիկնանց պատգամն առած,
Որ լուր տանի հայ երկրից:

Իոկ երբ լսեց զօրավարը
Կոյսի գալու նպատակ,
Դւնսւմ գանւած ռազմիկներին
Շուտով կանչեց ապարանք:

Եկան մէկ-մէկ հայոց երկրի
Իշխանները անվեհեր,
Եկաւ նաև Հայրապետը
Սուրբ Յովհանը ալեհեր:

Իսկ երբ ամենքն հաւաքուեցան
Մեծ դահլիճում միատեղ,
Նիստը բացեց սպարապետը
Զայնով հզօր ու ահեղ:

Պատմեց նըանց մօր սլատգամը
Եւ նպատակն հայ տիկնանց,
Սպա կարգաց և նամակը
Գրովագութ մօր գրած:

Ապշած ու լուռ լսում էին
Իշխանները ուլստասէր
Հայոց կնօջ սուրբ պատգամը
Նրա ուխտը անվեհեր:

Երբ աւարտուեց ընթերցումը
Մի վէճ սկսուեց նրանց մէջ,
Թէ ի՞նչ գրեն հայոց տիկնանց
Գործին ի՞նչպէս տան մի վերջ:

ՅՀ Առըրբ Յովան Եպիսկոպոս,
Յարմար գտան որ տիկնայք
Գան մասնակցեն այս կուտին:

Իսկ անվեհեր առիւծն հայոց
Եւ քաջ Ներսէնն ու Հրահատ
Այլ կերպ էին խօսում, զիճում
Ու դիմադրում անընդհատ:

— «Մենք հերիք ենք, միշտ կրկնում էր
Մամիկոնեանն ահաւոր,
Մեր սրերը կրնան տանել
Ցաղթութիւններ փառաւոր:

Իսկ մեր ամիկնայք թող սովորին
Ցաղթող որդոց դուրս գալ դէմ
Եւ պսակել այն քաջերի
Ճակատները քրտնագէմ:

— «Մենք հերիք ենք կրկնում էին
Կամսարական քաջերը,
Մենք չենք տանի մեր մայրերին
Դէպի լերանց լանջերը:

Թող պաշտպանութիւն տրվածքն այսոց
Ինչպէս իրանք են ուզում:

«Ցայց ամօթ է այստեղ քըննել
Պարտուած հայի վիճակը,
Վկայ է Աստուած, ո՞վ իշխաններ
Քաջ է հայոց բանակը:

«Մեզի համար չէ բացուելու
Սնարդանքի մի դառն օր,
Գրե՛նք, գրե՛նք հայոց տիկնանց
Ուրախ մնան, բախտաւոր»:

Իշխանները կամաց կամաց
Հաշտուեցան այն մտքին,
Օք հայ տիկնայքն աւելորդ են
Սրտադ լերանց մեծ կըռւին:

Նրանք շուտով պիտի սլանան
Դէպի հղօր թըշնամին,
Օք կաղմ, պատրաստ մօտենում է
Զարկանդի սահմանին:

Իսկ երբ իլանք յետ կը դառնան
Ժողովելու նոր ոյժեր,
Այն ժամանակ կոչ կուղարկեն
Տայքի տիկնանցն անվեհեր:

Իսկ այսօր լոկ յանձնարարուեց
Հայոց քաջին ամեհի,
Գրել տիկնանց՝ որոշումը
Իշխանական ժողովի:

ՆՈՒՍԴ. Ը.

ԷՌԻՒԾՆԵՐԻ ԲԸՆԵԿԻԼ.
Դիտես Հայկակ, ամեն ռազմիկ
Ունի միակ մի նպատակ,
Թէ երբ կըգայ ու կը հասնի
Ահեղ կըուի ժամանակ.

Որ ինքն անվախ տուած խաղայ
Վրէժն առնի թշնամուց,
Կըուի ահեղ, արեան դաշտում
Թափէ սրտի թոյնն ու բոց:

Եւ արդ նորից եկաւ, հասաւ
Այն երջանիկ ժամանակ,
Երբ ժողովեց բաջ Վահանը
Առիւծների գոռ բանակ:

Երբ սազմիկներն ամենն կողմից
Դէպ ապարանք փութացին:

Նրանց երկար նրգակները
Եւ սրերը շողշողուն,
Փայլում էին արեի տակ
Ինչպէս երկինք պսպղուն:

Փայլում էին վառ գոյներով
Արծաթապատ զրահներ,
Ճողում էին, վառվում, հանդշում
Որպէս հրեղին լեզուներ:

Եւ շատ շանցած ամբողջ վայրը
Խաղմիկներով ծած կուեցաւ,
Խօսք ու շշուկ, համբոյթ, աղմուկ
Ամեն կողմից լսուեցաւ:

Եկան մէկ-մէկ իշխանները
Հեծած ահեղ նժոյգներ,
Եկաւ նաև հայոց երկրի
Ծեր Մարզպանը ալեհեր:

Կամաց-կամաց կտրուեցին
Բարձր ձայներն ու աղմուկ:

Եւ զօրքն հայոց խոր յարգանքով
Հայեացքն հիւսիս դարձբած՝
Տեսաւ եկող ահեղ վաշտը
Ոտքից գլուխ ու հագած:

Մուայլ էին եկողների
Հայեացքները ահաւոր,
Թէկ նրանց լայն կրծքերին
Խաչեր կային մառաւոր:

Արդ, Յովհանն էր, որ գալիս էր
Հայոց զօրքին խառնուելու,
Ցետքից քցած մի շքախումբ
Մի շքախումբ ահարկու:

Նժոյգն հեծած սուրբ ծերունին
Ընթանում էր առջեկից,
Իսկ տասներկու եպիսկոպոս
Գնում էին յետեկից:

Ապա վացսուն արեղաներ
Եւ չորս հարիւր քահանայք,
Հագած զրահ, կազմ ու պատրաստ
Մնցնում էին շարունակ:

Այսպէս եկաւ մասնակցելու
Եկեղեցու սուրբ պետը,
Այսպէս եկաւ նա յայտնելու
Սիրած ազգին իր սէրը:

Խորհրդաւոր այդ վայրկեանին
Նորից լսուեց թմբկի ձայն,
Որ կարդի էր հրաւիրում
Հայոց զօնքեն ցիր ու ցան:

Հրաժեշտ տուին փեսաները
Գեղ հարսներին սիրասուն,
Հրաժեշտ առուեց անվախ մայրը
Քաջամարտիկ իր որդուն:

Եւ այդ ահեղ ժխորի մէջ
Ուր որ վեհ էր ամեն բան,
Յանկարծ լսուեց աղիողորմ
Մանուկների լացի ձայն:

Նըանք որ միշտ սովոր էին
Սիրած հօրը փարուելու,
Սուանց որոնց նըանց կեանքը՝
Դուցէ միշտ էր սկնալու:

Թէև լացով բայց զատուեցան
Ըն ռազմասէր հայրերից,
Նըանց լացն էլ շուտ խլացաւ
Հսկաների որոտից:

Ապա տիրեց մի լուռթիւն
Զօրքը կանգնեց յարգանքով,
Երբ դուրս բերին զօրավարի
Նժոյգն ահեղ ու կորով:

Զէր հանդարտուել կապուտակ ձին
Դեռ դոփում էր շարունակ,
Երբ երևաց առիւծն հայոց
Զեռքին բռնած մի դրօշակ:

Զօրքը ապշեց նըա տեսքից
Յարգանք տուեց իր պետին,
Որոտնդոստ կեցցէներից
Օդը թնդաց սաստկապին:

Դեղեցկատես քաջի դէմքին
Կարծես հուր էր շողշողում,
Մե աչքերը վառ բոցերով
Արևի պէս են փայլում:

Խոպովները թափուածէին
Իր ուսերին գեղանի,
Որ տալիս էր հայոց քաջին
Առիւծի տեսք ամենի:

Նուրբ ընշացքը նա ոլորեց
Հայեացքն ուղղեց դէս ու դէն,
Չափեց ոյժերն իր քաջերի,
Կանզնած ուրախ, ժպտագէմ:

Եպա հեծաւ իր նժոյգ ձին
Զօրքին տուեց մի նշան,
Որից յետոյ վաշտերն հայոց
Մէկ-մէկ առաջ շարժուեցան:

Եւ նա ընկաւ զօրքի առաջ
Սուրբ ձեռին շողշողուն,
Որից յետք գնում էին
Հեծեալ վաշտեր զարդարուն:

Նրա յետքից, որ արեն էր
Հայոց անբաղդ աշխարհի,
Որը վաղսւց կեանքն էր զոհել
Ահեղ դատին հայրենի:

Արդ, չէր մնացել Գողթան երկրում
Ոչ մի զուսան ալեհել,
Որն ի պատիւ այդ մեծ քաջի
Հէր յօրինել բիւր երգել:

Նա դարձել էր երգերի նիւթ
Համեստասէր գեղջկուհու,
Որի համար կեանքը ունէր
Լոկ նպատակ սիրելու:

Նրան էր միշտ գովարանում
Մայրը որդուն օրըելիս,
Նրան էին օրհներգ կարգում
Աղդի սև օրն յիշելիս:

Ելք զօրավորն իր բանակով
Պարիսպներին մօտեցաւ,
Մեծ Դւինի հին դարբասը
Շոփնդներով բացուեցաւ:

Լայն գռների կշտին նըստած
Գուսանքն էին երգ երգում,
Ողջ երթ մաղթում հայոց քաջին
Զօրքին մի ոյժ անհատնում:

Իսկ դափնեղարդ կամարներից
Զօրքերն հայոց անցկացան,
Հրաժեշտ առած, վերջին անդամ
Արագ-արագ հեռացան:

Այսպէս անցաւ բանակն հայոց
Երկրի անանց լեռներից,
Այսպէս անցաւ զաշտ ու անտառ
Իր հայրենի աշխարհից:

Միայն տեղ-տեղ մօտ գիւղերից
Հասնում էին նոր գնդեր,
Ինչպէս հեղեղ թափկում էին
Այն ծով բանակն անվեհեր:

Իսկ աղմուկը հայոց զօրքի
Հանում էր խոր արձագանք,
Որի նմանը շէր լսուելու
Հատ տարիներ շարունակ:

Երբորդ օրում բանակն հասաւ
Հին Ծրտաղի լեռներին,
Երբ թշնամու զօրքի մասին
Մեր բանակը լուր բերին:

Երբ որ լսեց առիւծն հայոց
Հայ գուժկանի խօսքերը,
Նրա սրտում բորբոքուեցան
Փոթորկալից կրքերը:

Իսկոյն և ետ նա արձակեց
Ահեղասաստ հրաման—
Առնել բանակն ու շուտ տանել
Երտաղ լեռներն անսասան:

Որ գիշերէ աղատ հանգիստ
Ցոգնած բանակն հայ երկրի,
Մինչ առաւօտ ոյժն հաւաքած՝
Ահեղ մարտին պատրաստուի:

Եւ զօրքն ելաւ ժայռերն ի վեր
Ներսեհապատ գիւղի մօտ,
Քանակ զրեց, հանգստացաւ
Մինչև բացուեց առաւօտ...

2ξ, ανմոռաց է այդ վեհ ժամը
Քաջի համար ռազմասէր,
2ի մոռացվում խուլ օրոտը՝—
Պատերազմի հըրաւէր:

ՆՈԽԱԳ Թ.

ԳԻԾԵՐԵՑԻՆ ԽՈՐՀՈՒԹԻՆ ԲԵՆԵԿՈՒՄ.

, ԿԵԱԲԻ ԽԵԵԽԱՆԳ Ի ՄԱՆ ՀԱՅԱՏԵԱ
ԷՅՑ ԵՒ ՄԱՆ ԽԵԵԽԱՆԳ ԱԲՈՒՅՈ ԿԵԱՅ
ԱՂ. ԻՆ

Ո՞վ կարող է, արդ մոռանալ
Այն ժխորը ահարկու,
Ով երբ և է մարտի դաշտում
Դուրս է եկել կռուելու:

Ով հմայուած պատերազմի
Գերմարդկային գօրութեամբ՝
Առաջ կերթայ դէպի մահը¹
Լցուած ահեղ բարկութեամբ:

Եւ ուր մարդը մոռանում է
Իր գոյութեան նպատակ,
Ուր չի դադում ահեղ միտքը
Կանդ է առնում ժամանակ:

2ի մոռացվում դէնքի շաշիւն
Խոր հառաշը յուսահատ,
2ի մոռացվում խուլ ժխորի
Արձականքը անընդհատ:

Եւ այսօր էլ երբ մեր քաջերն
Նստած էին խորհրդի,
Ցիշում էին այդ ժամերը
Պատերազմի դաշտերի:

Իսկ անցեալով ոգեսրուած
Դիւցազները ռազմասէր,
Դատում էին խիզախ յանդուզն
Վիճում էին անվիճեր...

— «Քաջի համար ինչ պէտք կայ
Լինել զգոյշ և խոհուն,
Նա կը յարձակուի և կը ջարդէ
Երբ կը հասնի թշնամուն»:

Այսպէս էր իր մտքում խորհում
Կամսարական քաջ ներսէցն,
Որ ձանձրացած երկար վէճից,
Հեռացել էր այդ նիստէն:

Անհանգիստ էր և Վահանը—
Այդ առիւծը անվեհեր,
Նրա կրծքի խոր հոգոցը
Մրձակում էր որոտներ:

Քայց նո ունէր մի նախագիծ
Մի ծրագիր համարձակ,
Որի համար երկար վիճեց
Եւ պաշապանեց բացարձակ:

— «Մենք չսպասենք, ասաց քաջը
Պարսից անյաղթ փղերին,
Դրոհ կը տանք նրանց վերայ
Որպէս առիւծ զայրագին:

,,Ու կը պատռենք ամուր շղթան
Հայոց անարդ թշնամու,
Արտադ լերանց լանջերն աղատ
Մեզ տեղ կը տան հանգչելու:

,,Եկէք թափենք մեր զայրոյթը
Բոնակալի զօրքի դէմ,
Բոցոտ շնչով մեր թշնամուն
Մի հարուած տանք մահագէմ:

,,2է, իշխաններ ես չեմ ուզէ
Որպէս երկչոտ թագնուել,
Եւ թշնամու սրի առջեն
Ընարդ հոգով խոնարհուել:

,,Լեռներն հայոց մեղ ինչ կասեն
Այդքան խեղճուկ տեսնելիս,
Կամ չպէտքէ մեղ անիծէ
Ցիշատակը նախորդիս“:

Խօսքը կտրեց անվախ քաջը
Խոր հոգոցով որոտաց,
Խխանները հայոց երկրի
Երկար մնացին շուաբած:

Ապա ելաւ Հայրապետը
Օրհնեց քաջին աննման,
Որ չպիտէ վախ ու երկիւդ
Որպէս առիւծ անսասան:

— „Ես էլ քեզ հետ համաձայն եմ
Ռվ քաջ հայոց զօրավար,
Ամօթ է մեղ պաշտպանութիւնը
Եկէք կոռւենք քաջաբար:

„Թող որոտով առաջ խաղայ
Մեր քաջերի բանակը,
Եւ ծածանէ սուրբ դրօշակը
Քաջ Պալունի Փափակը:

„Հրահատ, Ներսէն Կամսարականը
Թող ոյժ չնշեն զօրքերին,
Որ տակաւին չեն վարժուած
Ամօթապարտ փախստին“:

— «Ես էլ այդպէս եմ կամենում—
Խօսեց Մարզպանը-Սահակ,
Որ լուռ ու մունջ նստած էք
Ամբողջ վէճի ժամանակ:

„Ռվ իշխաններ, ինչի՞ սպասենք
Մեր այս անանց կիրճերում,
Մենք յարձակուինք, որ փառք գնեն
Անհաւասար այս կըովում:

„Սակաւաթիւ մեր զօրքերը
Որպէս մի գունդ հրեղէն,
Մենք կը մղենք դէպի առաջ
Այս ահաւոր լեռներէն:

„Սպարապետը թող աշխատի
Աղմուկ քցել ու շփոթ,
Մեր լեռներն էլ գիտեն հանել
Ահեղ ձայներ ու որոտ:

„Եհեղասաստ այդ կըուի մէջ
Չ'տանինք էլ յաղթանակ,
Գոնէ կասեն մեր յետնորդքը—
Պատիւ քեզի, քաջ բանակ“:

Երբ որ լսեց այս խօսքերը
Սոիւծ Վահանն անվեհեր,
Տեղից ելաւ, խոժոռ դիտեց
Խեղճ Մարզպանին ալեհեր,

Որ թոյլ տուեց յայտնել մի միտք
Քաջի համար անվայել,
Որ հայկական քաջ բանակին
Պարտուած կարծեց նա տեսնել:

— «Միթ'է խօսքէ—եթէ չյաղթենք
Կամ յաղթուինք մենք պարսկից»,
Ել ինչի՞ են երկար խորհում,
Մտքեր խլում իրարից:

— «Ով է տեսել, խօսեց քաջը
Անյաղթ հային պարտուելով,
Երբ նա մի ոյժ ու միասին
Կռիւ կը տայ ապահով:

„Հաւատացէք ինձ իշխաններ
Մերն է փառքն ու յաղթութիւն.
Եւ սա է լոկ ճանապարհը,
Թր պիտ տանի փրկութիւն:

„Ազատ մեծացած հայ ուազմիկը
Մի առիւծ է ամենի,
Որի զայրայթն հուր է ու բոց
Կամքը անյաղթ, սոսկալի»:

„2է շենք թողնէ, որ կործանուի
Մեր աշխարհը սրբազն,
Եւ շենք թոյլ տայ, որ նա լինի
Լոկ մեղ համար գերեզման:

„Ոյժ կը չնչենք կրուած հային
Սրտին—անշէջ մի կրակ,
Որ յետ գնէ կորած վառքը
Եւ պատիւը ոտնատակ:

„Արնոտ երկրի կոծն յուսահատ
Կը բոլբոքէ մեր հոգին,
Եւ մեղ կը մղէ վրէժի բոցով
Դէպի ազգի թշնամին:

„Մենք կը չորցնենք մեր դաշտերի
Արնով ներկուած գորշ ցողը,
Կոկ այն ցօղով սէր կը բուցնէ
Հայոց երկրի սուրբ հողը:

„Ուրեմն այսպէս մենք կը յարձակուինք
Ու ջարդ կը տանք քաջաբար,
Ազնւութեամբ ու պատրով
Փառք կը գնենք մեղ համար»:

Երբ կանգ առաւ զօրավարը
Ու իր խօսքը ընդհատեց,
Ուազմիկների վեհ խորհուրդը,
Մտքերի մէջ ընկղմուեց:

Բայց լոռւթիւնն—երկարատև
Սահակ Մարզպանն ընդհատեց.
Որ կանգնելով ծանր ու հանդարդ
Զօրավարին հարց տուեց.—

«Այժմ ասա, աղնիւ իշխան,
Վերջին հարցն էլ թող լուծուի,
Ի՞նչպէս բաժնենք մեր զօրքերը,
Ո՞վ ո՞ր կողմից յարձակուի:

„Ո՞ս մեղնից առաջ խաղայ
Առաջապահ զօրքերով,
Կամ ո՞վ հասնի մինչ թշնամին
Եւ լուր բերէ ըշտապով“:

«Առաջապահ զօրք հանելու
Կարիք չկայ, ո՞վ Մարզպան,
Բայց թեկերը մենք կը բաժնենք
Մեր քաջերին պատուական:

„Թող ձախ թեր ձեղի լինի
Կամսարական հերոսներ,
Դուք սիրումէք կոիւն ահեղ
Աղատ մարտը անվեհեր:

„Խոկ աջ թեր մենք կը յանձնենք
Վահեռնի քաջ բաշխին,
Նրան ընկեր մենք կը կարգենք
Սիւնեաց անվախ Բարգէնին:

„Խոկ Գնունի Ստովմն անվախ
Եւ քաջ Փափակ Պալունին,
Պատրաստ լինին միշտ օգնելու
Տկարացող կողմերին:

„Դուք էլ, ո՞վ տեաըք, հայոց Մարզպան
Եւ սրբազն ծերունի,
Զեր զիրքերին, պատուին յատուկ,
Միջին կողմը ձեզ լինի:

„Խոկ քաջերը Պապն ու Վրէն
Առիւծային կրծքերով,
Կը գան ձեզի օգնելու
Իրանց անյաղթ զօրքերով:

„Ես էլ մենակ, քաջերս առած
Առաջ կը խաղամ անդադար,
Որ շտապով սարսափ ազգեմ
Պարսից զօրքին անհամար“:

Նորից ակրեց մի լռութիւն
Իշխանական ժողովում,
Նորից սուզուան գիւցազները
Մտքի ահեղ ովկիանում:

Ապա հպարտ այն քաջերը
Մէկ—մէկ տեղից վեր կացան,
Եւ խորհրդի վրաններից
Կամաց կամաց հեռացան...

ՆՈՐՍ. Փ.

Վ Ե Հ Ե Ն Լ Մ Ե Ն Ը Կ

„Դուք որ կառողք եք զՏկարու-
րիւն տկարացն բարձէ՞ւ:
Եղի՛ն.

Թանակի մէջ տեղ, փարթամ վրանում
Նսաած էր մենակ գիւցազն ահաւոր,
Եւ խորասուզուած մտքերի ծովում
Թռչում էր դէպի դարերն հեռաւոր:

Երբեմն յուզուած, որպէս մի առիւծ
Հայացքն էր դարձնում հայոց բանակին,
Որ անվախ, ազատ հանգչում էր լոկի
Արտազի լերանց ժայռոտ լանջերին:

Եւ քանի՛ քանի՛ այդպէս գիշերներ
Հայոց զօրքերը բանակ են դրել,
Արտազ, Աւորայր, Հեր ու Զարեանդ
Մարդկային կարմիր արնով ողողել:

Եւ այսօք նորից բանակ հայկական
Պատրաստ է չափել իր ոյժը բաղկի,
Ու հեշտ չծախել պատիւն ու փառքը
Թարերով պաշտուած ոուրբ հայրենիքի:

—«Բայց ինչի՞ համար այդպէս է խորհում,
Այդպէս է ուզում գազանն ահաւոր—
Խօսեց վերջապէս դիւցաղն ամենի
Որպէս մի առիւծ անյաղթ, վիլաւոր:

„Եւ կամ բանի՞ դար այսպէս շարունակ
Պէտքէ անց կենան մէկ մէկի յետքից,
Մինչև ազատուի սիրտը մարդկային
Իր գաղանային շար հակումներից:

„Մարդու մէջ մեռնի եսը անողոք,
Դաւանանք դառնայ—սիրել ուրիշին,
Եւ այս արնաշաղ աշխարհն ահաւոր
Հմնայ բաժին անգութ՝ զօրեղին:

„Բայց ո՞չ, չէ գալու երջանիկ մի օր
Ժամը մեր ձգտսանց սուրբյաղթանակի,
Եւ բիւր դարերը բիւր ոճիրներով
Կնիք պիտ դնեն անվերջ ամօթի:

„Եւ այն ժամանակ, երբ միտքն անկապանք
Կը քննէ ազատ երկինք ու երկիր,
Դեռ մարդ-գազանը անլուզ կը բերով
Մեր մայր երկիրը պիտ ներկէ կարմիր:

„Միտքը ոյժ կը տայ նոր հնարքների
Եղբայրն եղբօր դէմ անվերջ զինելու,
Սիրտ ու դաւանանք ծաղրելով անվերջ
„Փրկութեան“ անունով արիւն թափելու...

„Եւ անթիւ դարեր, կրօններ նոր-նոր
Անզօր պիտ լինին մարդկանց աղդելու,
Մարդը կը մնայ իր ձգտումներով
Միշտ անգութ՝ գաղան, միշտ արիւնարբու:

„Կրօնի քարոզած սուրբ սկզբունքներն
Երբէք չպ'էտքէ մեր մէջ մարմնա,
Եւ եղբայրական քարոզն ու խթատ
Արնատենչ կամքին նոր զէնք պիտ դառնան:

„Եւ անթիւ դարեր աշխարհը այսպէս
Թաժին կը մնայ միայն զօրեղին,
Իսկ սիրտը խղճուկ պէտքէ լուր դիտէ
Գոյութեան կուի աւերիշ հետքին...

„Բայց դուք կրօններ ոյժ տուէք նրանց
Որոնք անզօր են, որոնք հալածուած
Որոնք ձեզանով կուզեն ազատել
Այս խեղճ աշխարհը արնով ողողուած:

„Իսկ ինձ երկսայրի սուր է հարկաւոր
Թշնամուս հանդէպ անվերջ կռուելու,
Իմ իրաւունքներն արհամարողի
Կարմիր արիւնը երկիր թափելու,

„Եւ սա կը մնայ ինձ խոր դաւանանք
Մի վերջին միջոց ազգիս փրկութեան,
Որ զինւած վառուած կանգնած անհամբեր
Կըսպասէ նորից կըուին յաղթական“:

Խօսքը կտրեց այն առիւծը
Եւ արձակեց մի հառաչ,
Որ որոտաց լուռ վրանում
Ինչպէս ծովի մի շառաչ.

Որ բազմելով ժայռոտ ափին
Կուգէ քանդել ամեն բան,
Սակայն նորից յորձանքներով
Ծով կը դառնայ անսահման:

Եւ բարկութեան այդ վեհ ժամին
Նորից նստեց առիւծը,
Գլուխն յինած ուժեղ ձեռքին
Թոցեր ցայտեց կըծքիցը.—

—«Ո՞վ իմ բանակ, այս անգամ էլ
Գու կը տանիս յաղթանակ,
Եւ չեմ թողնէ, որ երբ և է
Ամօթ կըրէ քո դրօշակ:

„Եւ մենք նորից ուրախ, հպարտ
Պիտի գառնանք դէպ Դըւին,
Ոզատ մարդու վսեմ վառքով
Ողջունելու ամենքին:

„Բայց ես կուզեմ, որ շուտ բացուի
Նուիրական այն սուրբ օր,
Երբ դու նորից ազատ ապրիս
Իմ հայրենիք սպաւոր:

„Եւ ես կուխտեմ մինչ այդ վայրկեան
Վար չըդնել իմ սուրբ,
Ո՞ւ ես կուխտեմ միշտ վառ պահել
Ազատութեան այդ հուրը:

„Ես ուխտում եմ քո թշնամուց
Վրէժգ առնել դարեսը,
Եւ քո գէմքից վերացնել
Սուզդ ախուր ու մոլոր:

„Ես ուխտում եմ, իմ հայրենիք,
Միւել քեզի անսահման,
Քո փրկութեան, փառքի համար
Հըխնայել ոչ մի բան:

„Իսկ դուք, հայոց մեղմ հովիկներ
Միշտ վեհ երգեր երգեցէք,
Եւ դուք անուշ, ջինջ վտակներ
Ուրախ երգեր կարկաչէք:

„Հայ ուազմիկն էլ շուտով կը դայ
Իր վեհ երգը երգելու,
Նրա երգը թոյն է ու բոց,
Եւ մի վրէժ ահարկու:

„Եւ միթէ կայ ստրկութիւն
Այնտեղ ուր կայ սիրտ ու կամք,
Ուր տակաւին չեն շառաշել
Ճղթաների հառաշանք:

„Ուր կայ հզօր գիտակցութիւն
Դէպի պարտքն ու գաղափար,
Ուր կայ հպարտ, անշէջ մի սէր
Դէպի ազգը վշտահար“:

Տեղից կանգնեց զօրավարը
Հազիւ խօսքը վերջացրած,
Լուռ ու հանգարդ սկսեց քայլել
Մտքի ծովին յանձնուած:

Ըպա արագ նա դուրս ելաւ
Իշխանական վրանից,
Ու մտազբաղ կանգնեց լրիկ
Այն երկնից տակ աստղալից:

Մի խոր շշուկ միայն հասաւ
Զօրավարի ականջին,
Որ զմայլուած լուռ դիտում էր
Հանգչող հսկայ քաջերին:

Ա՛խ, այդ շշուկն ինչե՞ր շասեց
Այն առիւծին ահարկու,
Որբան մաքեր, որբան ցաւեր
Ցաջորդեցին իրարու...

Հանդարդ այրւող խարսյիներից
Միայն ծուխն էր գալարվում,
Եւ մեղմ լուսնու շողբերի տակ
Դէպի երկինքը բարձրանում:

Եւ ժամ առաջ բանակն ուրախ
Խոր լոել էր ահալի,
Մի լուսին, որ նման էր
Հանդարդ ծովին ամեհի:

Բայց ինչի՞ էր այդպէս լոել
Հզօր բանակն հայկական
Ինչ՝ էր խորհում հայ ռազմիկը՝
Այդպէս տխուր ու անձայն.

—Պատերազմի ահեղ ոգին
Ունի մի խոր „լուսիւն“,
Ուր կըսվում են, թէև անձայն
Մահն ու կեանքի վրկութիւն,

Ուր ամեն ոք խորասուզուած
Մաքի ծովում հեռաւոր,
Անձայն ու լուռ կսկսէ յիշել
Գալիք ըովէն ահաւոր.

ՆՈՒՍԴ. Ժ.Ա..

Բ Ե Ն Ը Կ Ի Խ Ս Հ Ե Բ Ը.

Լուռ գիշերին, երբ հանգչում էր
Անվախ բանակն հայկական,
Յանկարծ տիրեց մի լուսին,
Եւ դադարեց ամեն ձայն:

2Էին լսվում ուրախ երգեր
Եւ մեղմ ձայնը բամբիռի,
Դադարել էր շկայունը
Որոտացող զէնքերի:

2Էին գովում գուսանները
Փառքի օրերն չայկազանց,
2Էին հնչում բամբիռները
Վիշան ու լացը հայրենեաց:

Երբ կը շաշէ անգութ սուրը
Մարդկանց կեանքը հնձելու,
Երբ ուազմիկը սիրտը արիւն
Կերթայ մահը գրկելու:

Երբ կը մոռնայ մարդ էակը
Կարհկցութիւն ու գգուանք,
Երբ որ կուղէ լափել անվերջ
Որպէս գազան մի վայրագ:

Եւ անզգայ նա կընդունէ
Մահուան բաժակն ահաւոր,
Կամ թէ հպարտ, քաջ յաղթողի
Փառքը ահեղ ու հզօր:

Ըւ մեր բանակն այդ գիշերին
Մարերի մէջ ընկլմուած,
Լուռ ու տխուր այս էր խորհում
Մաքի ծովին յանձնուած:

Մէկն յիշում էր կարօտ թողած
Անուշ մօրը սիրելի,
Միւսն—անոք իր քրօջը,
Կամ վիճակը որբ զաւկի:

Մատաղ զինւորն յիշում էր լուռ
Իր իղձերը անհամար,
Որին գուցէ չէր բացուելու
Մի առաւօտ գրկալար:

Եւ այն ահեղ ժխորի մէջ
Պիսի մարէր կեանք ու յոյս,
Ու իր ծաղիկ, վառ յսոսերին
Գըրկէր տխուր վերջալոյս:

Բայց հայկական բանակն անվախ
Ճատ շըխորհեց տիրագին,
Եւ մեղկաբար նա չը ընկճեց
Ահեղ սիրտն ու վեհ հոգին:

Լուռ բանակի հարաւ կողմից
Յանկարծ լսուեց մի մրմունջ,
Որ հնչվում էր մեղմ ու անուշ
Եւ տարածում մի շըշունջ:

Բանակ հասնող հայ գուսանի
Բամբոի ձայնն էր թախծալի,
Որ այդ ահեղ, խոր գիշերին
Հնչուեց այնքան ցանկալի:

Գուսանն եկտօր ծեր Յովհանն էր՝
Հայոց փառքի ծեր վկան,
Որ հազիւ հաղ ուշ գիշերին
Հասաւ բանակն հայկական:

Եւ անբաժան հայոց զօրքից
Այս անգամ էլ ծերունին,
Արտազ հասաւ շունչը կտրած
Ընկերակցել բանակին:

Եւ ծերուկը ուշ գիշերին
Քամբիոն անուշ հնչեցրեց,
Անմահ նախնեաց գովքն երգելով
Լսողների սիրտն այրեց:

Վրայ հասան զինւորները
Ամեն կտղից բանակի,
Վրդովելով լուռ գիշերուայ
Խոր լռութիւնն ահալի:

„Յովհանն եկաւ“ խոր շշուկը
Ողջ բանակում տարածուեց.
Եւ ամեն ոք խոհը թողած
Դէպի գուսանը վաղեց:

Քաղցը էր հնչում մեղմ բամբիռը
Ծերուկ երգչի ձեռքի մէջ,
Քաղցը էր մնջում ու հեկեկում,
Նրա ցան էլ էր անշէջ...

Բայց ծերունին երկար չ'երգեց
Հայրենիքի ցաւերը,
Հանգչեց մի քիչ ու յարդարեց
Քամբուի յոգնած լարերը:

Եւ զգացուած երգեց երգը
Ակուիի քաջերի,
Որ ծերունին յորինել էր
՚ի յիշատակ այդ կուի:

ԳՈՒՍԱՆԻ ԵՐԳԸ:

„Ելաւ արփին ոսկի շողով
Իր լուսեղէն աշխարհից,
Լոյսից պայծառ շողեր ելան
Հայ քաջերի սըերից:

„Արփին ելաւ ու սղողեց
Հայոց սիպտակ սարերը,
Հայ ռազմիկը կարմիր ներկեց
Լայնատարած դաշտերը:

„Ո՛չ մի ոքոտ աշխարհն այնպէս
Զէր գղրդել սաստկագին,
Ինչպէս անյաղթ հայոց զօրքի
Գրոհն ահեղ և ուժգին:

„Թողաց հըսկայ ծեր Մասիսը
Սյդ մահաշունչ որոտից,
Սարսակեցին դաշտ ու անտառ
Թափուած արեան գետերից:

Եւ Ակոռին, հայոց գիւղը,
Տեսաւ վառքը հայ զէնքի,
Տեսաւ բնչպէս բանակն անվախ
Ջարդեց պարսկին ատելի:

„Տեսաւ քաջին Կամսարական
Որպէս մի ժայռ ահաւոր,
Որ չ'գիտէ նահանջն ինչ է,
Ինչպէս առիւծ վիրաւոր:

„Արփին անցաւ, վերջին շողով
Կարմիր ներկեց ամպերը,
„Յաղթեց քաջը— անյաղթ ներսէհն“
Որոտացին լեռները“:

Ծեր երգիշը երգը կտրեց,
Կըտրեց ձայնը բամբիռի,
Որ մեղմ, անուշ մլոնչում էր
Փառքը հայոց քաջերի:

Իսկ լսողներն այն զգացուած
Խինդ ու ծիծուղ բարձրացրին,
Բիւր պատիւներ, անթիւ օրհնենք
Ծեր գուսանին մաղթեցին:

Ոգեւորիշ անուշ երգը
Վառեց, յուղեց ամենքին,
Մոնչեցին հայ քաջերը
Որպէս առիւծ զայրագին:

Իսկ կէս գիշերն արդէն անցած
Ռանակն սկսեց մրափել,
Խարոյկները հանգան մէկ մէկ,
Լուսինն երկնից էր անցել:

Միայն եղբեմն խուլ լսվում էր
Պահապանի ոտքի ձայն,
Որ հսկում էր անքուն աշքով
Մեր վաշտիրին ցիր ու ցան:

ՆՈՒՐԳ. ԺԲ.

Պ Է Տ Ե Ր Ա Զ Մ :

Ման ոչ իմացեալ ման է
Ման իմացեալ անմահութիւն է
Եղի՛ցէ:

Այն սուրբ վայրերն, ոբոնք այսօր
Խոպան դարձած, ամայի
Հառաջում են դեռ չ'սորուած
Անարդ լծին օտարի.

Որոնց այսօր կապկապում է
Բոնակալի կօւռ շըղթան,
Ուր չի լսվում ոչ մե շշուկ,
Կենդանութեան ոչ մի ձայն,

Կար ժամանակ և ոչ հեռու
Երբ այդ երկրում սրբանուէր,
Հնչում էին, խըռխտ թնդում,
Սուրբ յաղթութեան որոտներ:

Լերանց վերայ որպէս արծիւ
Հայ ռազմիկն էր սլանում,
Ազատութիւնն իր հայրենեաց
Արեան գնով պահպանում:

Դէհ, դու լսիր, բարի՛ Հայկակ
Ինչպէս կըուեց քաջարի
Այն բանակը, որին զինեց
Մամիկոնեանն ամեհի.

Ո՛, դու լսիր հպարտ, ուրախ
Հայ ռազմիկի վեհ փառքը,
Որ դարերին աւանդ թողեց
Ազգի վսեմ պարծանքը...

Երբ երեցան երկնից վերայ
Վառ արևի շողքերը,
Վրաններից արագ-արագ
Դուրս թափուեցան զօրքերը:

Լուռ ու անձայն ամեն զինոր
Զրահն հագաւ սուր կապեց,
Եեղին բռնած լայն աղեղը,
Կազմ ու պատրաստ սպասեց.

Խորհրդաւոր այդ վայրկեանին
Լսուեց ձայնը թըմբուկի,
Որ կարգի էր հսաւիրում
Մեր վաշտերին ամեհի:

Առաջ անցաւ քաջ այրուձին
Զեռքում բռնած լայն սրեր,
Հերդով կանգնեց զօրքն հետևակ
Բռնած երկար նիզակներ:

Դոփում էին պինդ երկիրը
Զիանքն ահեղ, վիթխարի,
Վրդովելով լուռ հանգիստը
Հայոց հսկայ լեռների:

Իսկ ռազմասէր զինորն հայոց
Սուր ու նիզակն էր շաշում,
Ուրոնց ձայնից երկինք, երկիր
Ահից էին հառաշում:

Ելան մէկ-մէկ վըրաններից
Իշխանները կորովի,
Նժոյգն հեծաւ կամսարական
Անվախ ներսէհն վիթխարի:

Հայոց ծերուկ Հայրապետը
Եւ Մարգարիտ ալեհեր
Զիերն հեծան խրոխտ ու քաջ
Ինչպէս զինւոր անվեհեր:

Եւ մեր զօրքերն այդպէս պատրաստ
Բաժանուեցան թևերի,
Ինչպէս յայտնեց մեծ խորհրդին
Հայոց առիւծն ամեհի:

Այն ժամանակ սանձից բռնած
Առաջ բերին քաջի ձին,
Որ մոռնչով հառաչում էր,
Դոփում գետինն անհամբեր:

Իսկ ահեղ ձին սանձն էր կրծում
Ճուրջը նայում անընդհատ,
Երկար գիտում արձակ դաշտին
Նորից տնքում յուսահատ:

Եւ նա կարծես կուզէր թռչել
Բանակն հասնել թշնամու,
Կարծես կուզէր որ շուտ հասնէր
Կըուի ժամը ահարկու:

Թոկ երբ տեսան զինւորները
Զօրավարի նժոյդ ձին,
Պողոճիդաւոր մի լոռիթեամբ
Կազմ ու պատրաստ կանգնեցին:

Յանկարծ լսուեց մի գղրդիւն,
Թնդաց բանակը վիթխարի,
Երբ երեաց Մամիկոնեան
Հղօր առիւծն ամեհի:

Հեծաւ քաջը փրփուր դարձած
Իր կապուտակ նժոյդ ձին,
Որ տակաւին սանձն էր կրծում
Եւ դոփում էր սաստկագին:

Սպա դարձաւ իր քաջերին
Անուշ ժպտով ողջունեց,
Եւ ձեւքն ուղղած դէպ թշնամին
Մարտի նշանը նա տուեց...

Եւ կազմ, պատրաստ բանակն հայոց
Ճարժուեց դէպի թշնամին,
Արպէս մի շանթ, կրակ ու բոց
Գրոհ տուեց նա ուժգին:

Սուր սուսերներ, նիզակ, զբահ
Կրակ տուին շողացին,
Օդում լսուեց մի շառաշխիւն
Լեռ ու անձաւ դողացին:

Փըփուր գարձած ձիանքն ահեղ
Քէպ թշնամին սլացան,
Դոփիւն, որոտ, բարձր հրճնջոց
Սմեն կողմից լսուեցան:

Գողաց առիւծը լերան կիրճում
Հայոց գօրքի սարսափից,
Հայոց երկրի հաւքերն անթիւ
Հեռու վախտն այդ ահից:

Եւ հայ բանակն այդ ահաւոր
Միպտակ փոշու ամպերով
Մօտենում էր իր թշնամուն,
Միըլը լցրած կրակով...

Հայոց գօրքի դէմ յանդիման
Բարձր լերանց լանջերին,
Ծանր ու ահեղ բանակ դրած
Մպասում էր թշնամին:

Զբահապատ անթիւ վաշտեր
Կանգնած էին պատրաստի,
Նրանց կշտին դոփում էին
Փղերն ահեղ վիթխարի:

Անծայր դաշտում բաց տեղ չկար
Սուր ու նիզակն էր շողում,
Լեռ ու անտառ դարան մտած
Թշնամին էր սպասում:

Ակնթարթում վերացուեցան
Վրանները բիւրաւոր,
Ծուխն լնդհատուեց խարոյկներից
Զարժուեց բանակն ահաւոր:

Ել չերեաց հայոց դաշտը
Ոչ էլ լեռներն Արտազի,
Միայն լսուեց մի խուլ որոտ—
Արձագանքը լեռների:

Եւ թշնամին արագ-արագ
Սուաչ խաղաց անարգել,
Օրպէս մի ծով փրփուր դարձտծ
Վրայ վաղեց չնշարգել...

Քայց այն կրակ քաջերի հետ
Ո՞վ կը յանդգնէր կռւելու,
Երբ այնտեղ էր առիւծն հայոց
Մամիկոնեանն ահարկու:

Եւ դաշտ ու ձոր զուր էր բռնել
Ազդի անարդ թշնամին,
Զուր ծովի սէս մոռւնչ հանեց,
Զուր էր զինել փղերին:

Հայոց փոքրիկ բանակն ահեղ
Մի անդամ էլ սրոտաց,
Եւ քաջաբար մխուեց սրտում
Պարսից զօրքի սարսափած:

Նետերի ճիչ, սրի շաշիւն
Ողջ աշխարհը գղրղեց,
Որոտ, դոփիւն, ռազմի ձայներ
Մինչև երկինք տարածուեց:

Աջ ու ահեակ գետին փոռուան
Անթիւ վեղեր ու մարդիկ,
Արիւնն հոսեց գետերի պէս
Դաշտը դարձաւ ճապաղիք:

Հայ քաջերի բանակն անվախ
Կըտրեց, անցաւ թշնամին,
Ինչպէս հեղեղ ողջն աւերեց՝
Ինչն արգելում էր իր ուղին:

Կարմիր ներկուեց ողջ երկիրը
Թաշտը ծածկուեց դիերով,
Լեռներն հայոց խոր սուգ մտան
Մեռնող մարդկանց հառաշով:

Եւ այդ ահեղ ժխորի մէջ
Օրհասական այդ ժամում,
Միւյն հայոց քաջ առիւծի
Հզօր ձայնն էր որոտում,

Որ համնում էր արծւի թկով
Տկար կողմին օգնութեան,
Որ անընդհատ ոյժ էր շնչում
Հայոց զօղքին անսասան:

Մութ լեռները գղրղացին
Երարանցման ձայներից,
Երբ թշնամու նոր վաշտերը
Գրոհ տուին բարձունքից:

Եւ մի վայրկեան ապշած մնաց
Հայ քաջերի բանակը,
Երբ որ տեսաւ կազմ ու պատրաստ
Պարսից զօրքի քանակը:

Նետ ու առպար ժովի նման
Ծփում էին, շողզողում,
Որոտնդոսա խուլ ձայներով
Զէնքերն էին շառաչում:

Երբ որ տեսաւ հայ առիւծը
Որոտացող թշնամուն,
Նրա սրտում բորբոքուեցան
Կըքեր ահեղ ու անհուն

Հզօր ձայնով հրաման տուեց
Կամսարական քաջերին,
Առաջ մղել զրահ հագած
Հայոց հզօր այրուձին:

Մոնշեցին նժոյգները
Կամսարական քաջերի,
Երբ լսուեցաւ հրամանը
Սպարապետ Վահանի:

Նոր ոյժ առած վերջին ճիգով
Առաջ իսաղաց այրուձին,
Մինչ յաղթութիւնը շահած գիտէր
Հայոց ուժեղ թշնամին:

Նորից ելան փայլուն շողեր
Հայ քաջերի սրերից,
Նորից ընկան կուի դաշտում
Վաշտեր վաշտի յետեից:

Որպէս մրբիկ մեր այրուձին
Նորից ցըուեց թշնամուն,
Որին չօգնեց ոչ իւր դիրքը,
Ո՛չ փղերը աննկուն:

Նորից լսուեց մեր շարքերում
Ուրախութեան աղաղակ,
Հայոց զօրքը մի անգամ էլ
Տարաւ վայլուն յաղթանակ...

Իսկ այս անգամ ո՛, վերջինն էր
Կոիւն էլ չէր նորոգվում,
Պարսից թմրկի խուլ ձայները
Մերոնց այս գոյժն էր բերում:

Եւ թշնամին յուսահատուած
 Կամաց-կամաց նահանջեց,
 Հայոց զօրքի խոր ցասումից
 Փախուստ տալով ագաթուեց։

 Եւ նա փախաւ... աւար թողած
 Իր բանակը քաջ հային,
 Որ յաղթութեան որուաներով
 Տիրեց հսկայ լեռներին։

 Օրը մթնեց հանգիստ առան
 Ռազմիկները կորովի,
 Լերանց լանջին նորից վառուեց
 Խարսչները բանակի։

 Դդրդացին ողջ լեռները
 Ուրախութեան ձայներից,
 Կուսինն ելաւ և հաշտ նախեց
 Հայոց չքնաղ երկնքից։

 Իսկ մեր զօրքը ուրախ, հպարտ
 Տօնեց փառքը այդ կըսւի,
 Յաղթողների գովքն երգեցին
 Գուսանները հայրենի։



Ց Ա Ն Կ

Նախերգանք						
Ա) Վշտի երգիւը	:	10
Բ) Գիշեր	:	.	,	.	.	18
Վ) Յովհան գուսանը	:	26
Դ) Սմբացում	:	34
Ե) Կանանց խորհուրդը	:	43
Զ) Մամրուանի հանգիստը	:	53
Է) Դւինի առաւտը	:	63
Ը) Արիծների բանակը	:	73
Թ) Գիշերային խորհուրդը բանակում	:	82
Ժ) Վահանը մենակ	:	93
ԺԱ) Բանակի խոհերը	:	100
ԺԲ) Պատերազմ	:	109

10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
550
551
552
553
554
555
556
557
558
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
660
661
662
663
664
665
666
667
668
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
720
721
722
723
724
725
726
727
728
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
730
731
732
733
734
735
736
737
738
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
740
741
742
743
744
745
746
747
748
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
760
761
762
763
764
765
766
767
768
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
810
811
812
813
814
815
816
817
818
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
820
821
822
823
824
825
826
827
828
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
830
831
832
833
834
835
836
837
838
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
840
841
842
843
844
845
846
847
848
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
860
861
862
863
864
865
866
867
868
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
880
881
882
883
884
885
886
887
888
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
890
891
892
893
894
895
896
897
898
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
910
911
912
913
914
915
916
917
918
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
920
921
922
923
924
925
926
927
928
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
930
931
932
933
934
935
936
937
938
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
940
941
942
943
944
945
946
947
948
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
960
961
962
963
964
965
966
967
968
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
980
981
982
983
984
985
986
987
988
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
1000

ՀՀ Ազգային գրադարան



NL0351322

ՀՀ Ազգային գրադարան



NL0173889

44770